

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1

ք. Երևան

16.01.2006թ.

Ներկա էին խորհրդի 72 անդամներից 67-ը:

Նախագահող՝ ԵՊՀ խորհրդի անդամ, ՀՀ Կրթության և գիտության նախարար
Ս. Երիցյան

Օրակարգում.

1. ԵՊՀ խորհրդի նախագահի ընտրություն:
2. ԵՊՀ խորհրդի քարտուղարի ընտրություն:
3. ԵՊՀ խորհրդի աշխատակարգի հաստատում:
4. ԵՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգի հաստատում:

1. ԵՊՀ խորհրդի նախագահի ընտրություն:

Հ. Միրզոյանը առաջարկեց ԵՊՀ նախկին ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի թեկնածությունը:

Ռ. Մարտիրոսյանը թեկնածությունը գրանցվեց որպես ԵՊՀ խորհրդի նախագահի միակ թեկնածություն:

Պաշտպանիչ ելույթով հանդես եկան Հ. Միրզոյանը, Ս. Հախումյանը:

Ա. Ավետիսյանը խնդրեց պարզաբանել, թե արդյոք առկա է Ռ. Մարտիրոսյանի հրաժարականը ԵՊՀ ռեկտորի պաշտոնից և արդյոք այն բավարարված է, քանի-որ համաձայն Հայաստանի հանրապետության Բարձրագույն և հետբուհական կրթության օրենքի և Երևանի պետական համալսարանի կանոնադրության ԵՊՀ խորհրդի նախագահ չի կարող ընտրվել գործադիրը:

Ս. Երիցյանը տեղեկացրեց, որ ներկայացված է ռեկտորի պաշտոնից Ռ. Մարտիրոսյանի ազատման դիմումը, որը բավարարված է:

Խորհրդի կողմից առաջարկվեց ստեղծել փակ, գաղտնի քվեարկության հաշվիչ հանձնաժողով: Առաջարկվեցին Արա Ավետիսյանի, Աիդա Ավետիսյանի, Հայկ Ավետիսյանի, Վարդգես Ասլանյանի և Ա. Մամաջանյանի թեկնածությունները:

Որոշվեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի կազմը վերոհիշյալ թեկնածություններով:

Կողմ՝ 67, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքները, համաձայն հաշվիչ հանձնաժողովի 16.01.2006թ.-ի նիստի թիվ 1 արձանագրության, հետևյալն էին.

Կողմ` 32, դեմ` 35, անվավեր` 0: (Կից ներկայացվում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը և քվեաթերթիկները` փակ ծրարով):

Որոշվեց հաստատել քվեարկության արդյունքները և Ռ. Մարտիրոսյանին համարել չընտրված ԵՊՀ խորհրդի նախագահ.

Կողմ` 67, դեմ` 0, ձեռնպահ` 0:

2. ԵՊՀ խորհրդի քարտուղարի ընտրություն

3. ԵՊՀ խորհրդի աշխատակարգի հաստատում:

4. ԵՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգի հաստատում:

Նախագահող Ս. Երիցյանը առաջարկեց ձևավորել ԵՊՀ խորհրդի աշխատակարգի և ռեկտորի ընտրությունների ընթացակարգի մշակման ժամանակավոր հանձնաժողով:

Առաջարկվեցին Արա Ավետիսյանի, Արմեն Հարությունյանի, Գագիկ Ղազինյանի, Հայկ Ավետիսյանի և Դավիթ Հայրապետյանի թեկնածությունները:

Որոշվեց օրակարգի մյուս հարցերը հետաձգել մինչև խորհրդի հաջորդ հիստը և հաստատել ժամանակավոր հանձնաժողովի կազմը վերոհիշյալ թեկնածություններով, հանձնարարել հանձնաժողովի անդամներին մինչ հաջորդ նիստը մշակել և ԵՊՀ խորհրդի ընդունմանը ներկայացնել ԵՊՀ խորհրդի աշխատակարգի և ԵՊՀ ռեկտորի ընտրությունների ընթացակարգի նախագծերը:

Կողմ` 67, դեմ` 0, ձեռնպահ` 0:

Նախագահող`

Ս. Երիցյան

16.01.2006թ.

ք. Երևան